



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

29.06.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-16/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ՝ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.02.2016թ. թիվ 1/73-3/4613-16, 29.03.2016թ. թիվ 1/73-3/10793-16, 14.04.2016թ. թիվ 1/73-3/12075-16, 20.04.2016թ. թիվ 1/73-3/12509-16 և 19.04.2016թ. 1/73-3/12384-16 գրություններով ներկայացված «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00883186) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ՝ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-16/16 բողոք) և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության 04.11.2015թ. թիվ 07/21.2.2/8805-15, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 14.03.2016թ. թիվ 13-01/440, ՀՀ բնապահպանության նախարարության 14.03.2016թ. թիվ 5/026.2/50931-16, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 16.03.2016թ. թիվ 08/21/1/850-16 և «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 21.03.2016թ. թիվ 01/10-19 գրությունների և դրանց կից ներկայացված փաստաթղթերի պատճենների հիման վրա, համապատասխանաբար՝ 10.02.2016թ. թիվ 1/73-3/4613-16, 29.03.2016թ. թիվ 1/73-3/10793-16, 14.04.2016թ. թիվ 1/73-3/12075-16, 20.04.2016թ. թիվ 1/73-3/12509-16 և 19.04.2016թ. 1/73-3/12384-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն»

ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված կազմակերպությանը Ցուցակում ներառելու համար:

2. «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 16.02.2016թ. թիվ 01/04.1/468-16, 31.03.2016թ. թիվ 01/04.1/1264-16, 22.04.2016թ. թիվ 01/04.1/1624 և 24.04.2016թ. թիվ 01/04.1/1623-16 գրություններով դիմել է «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին:

«Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն 04.03.2016թ. թիվ 023 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ԷՆՇՀԱՊՁԲ-15/3-15-16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 20.10.2015թ. հայտ է ներկայացրել:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարտավորությունների վերաբերյալ տրամադրված եզրակացության համաձայն՝ 6 737 572 ՀՀ դրամ հարկային պարտավորության գումարը նշված է եղել որպես ժամկետանց, սակայն այդ գումարը եղել է ԵՏՄ-ի գծով ԱԱՀ գումար, որը կարող էր համարվել ժամկետանց, որպես ապառք, 21.10.2015թ.-ից սկսած, ուստի Ընկերությունը դեռևս 20.10.2015թ. (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ժամկետանց պարտավորություններ չի ունեցել:

Ընկերությունը 18.04.2016թ. թիվ 23 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-16/07» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա 24.02.2016թ. դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությամբ 165 822 ՀՀ դրամ հարկային պարտավորությունը եղել է հարկային տեսչության աշխատակիցների կողմից կատարված սխալի արդյունք:

«Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն 03.05.2016թ. թիվ 52 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Վ.Ա.Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3» ծածկագրով ընթացակարգին

մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 26.02.2016թ. դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչը հավաստվել է նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 29.04.2016թ տրամադրված թիվ 3070 տեղեկանքով:

Ընկերությունը նույն գրությամբ նշել է նաև, որ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից կազմակերպված «ՀՀ ՔԾԽ ՇՀԱՊՁԲ-15/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրը՝ 02.03.2016թ., նույնպես չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

«Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն խորհրդին է ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարության օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության գլխավոր վարչության օպերատիվ հետախուզության վարչության **29.02.2016թ.** N 1430258 վարչական ակտը, համաձայն որի՝ Ընկերությունը հարկային մարմնի զարգացման ֆոնդին պետք է վճարի **22 500 ՀՀ դրամ, վճարման ժամկետը սահմանելով 10 օր (մինչև 09.03.2016թ.):**

Միննույն ժամանակ, Ընկերությունը ներկայացրել է հարկային մարմնի զարգացման ֆոնդին 22 500 ՀՀ դրամ գումարի վճարումը 02.03.2016թ. կատարված լինելու վերաբերյալ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի N 000039 բյուջետային փոխանցման պատճենը:

Ընկերությունը խորհրդին է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Նոր Նորքի հարկային տեսչության կողմից 29.04.2016թ. տրամադրված թիվ 3070 և 09.06.2017թ. տրամադրված թիվ 3106 տեղեկանքները և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 5 բաժնի կողմից տրամադրված թիվ 79 տեղեկանքը, ըստ որոնց «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն **20.10.2015թ., 24.02.2016թ. և 26.02.2016թ.** (հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ) ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

3. ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացրած փաստարկները դիրքորոշումը

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու 1) 04.11.2015թ. թիվ 07/21.2.2/8805-15 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ վերջինիս կողմից գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԷՆ-ՇՀԱՊՁԲ-15/3-15-16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակից «Կապիտալ

Քոնսթերաքշն» ՍՊԸ-ի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարցում է կատարվել ՀՀ ֆինանսների նախարարությանը, որին ի պատասխան Նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 20.10.2015թ. ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 6 737 572 ՀՀ դրամի չափով:

4. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու 2) 14.03.2016թ. թիվ 13-01/440 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ Պատվիրատու 2-ի կողմից գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-16/07» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին 24.02.2016թ. հայտ ներկայացրած մասնակից «Կապիտալ Քոնսթերաքշն» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 165 822 ՀՀ դրամի չափով:

5. ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ բնապահպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու 3) 14.03.2016թ. թիվ 5/026.2/50931-16 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով, որ Պատվիրատու 3-ի կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/3 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/02)» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությամբ «Կապիտալ Քոնսթերաքշն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 02.03.2016թ. ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն:

6. ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը (այսուհետ նաև՝ Պատվիրատու 4) 16.03.2016թ. թիվ 08/21/1/850-16 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ

հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 48-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ներկայացնում է տեղեկատվություն այն մասին, որ Պատվիրատու 4-ի կողմից կազմակերպված «ՀՀ ՔԾԽ ՇՀԱՊՁԲ-15/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակից «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 22 500 ՀՀ դրամի չափով:

7. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու 5) 21.03.2016թ. թիվ 01/10-19 գրությամբ դիմել է ՀՀ Ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով, որ Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետով համաձայն՝ Պատվիրատու 5-ի կողմից կազմակերպված «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների վերաբերյալ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությամբ «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն:

8. ՍՑ-ԳԲԽ-16/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ Ֆինանսների նախարարության 10.02.2016թ. թիվ 1/73-3/4613-16, 29.03.2016թ. թիվ 1/73-3/10793-16, 14.04.2016թ. թիվ 1/73-3/12075-16, 20.04.2016թ. թիվ 1/73-3/12509-16 և 19.04.2016թ. 1/73-3/12384-16 գրություններով ներկայացված «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից գրենական պիրույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԷՆ-ՇՀԱՊՁԲ-15/3-15-16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1)

• Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով **20.10.2015թ.** հայտ է ներկայացրել «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն:

- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (20.10.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Պատվիրատու 1-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ, խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 1-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն 2015թ. հոկտեմբերի 20-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **6 737 572 ՀՀ դրամ** չափով, ինչի արդյունքում Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովն Ընկերության հայտը մերժել է:

- «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն Խորհրդին է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրված թիվ 79 տեղեկանքը, ըստ որի՝ Ընկերությունը 20.10.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ժամկետանց հարկային պարտավորություն չի ունեցել:

2. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-16/07» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2)

- Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով **24.02.2016թ.** հայտ է ներկայացրել «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն:

- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (24.02.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Պատվիրատու 2-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ, խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 2-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն 2016թ. փետրվարի 24-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **165 822 ՀՀ դրամ**ի չափով:

- Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովի կողմից 02.03.2016թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 03 արձանագրության 2-րդ կետով որոշվել է մերժել «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հայտը:

- «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն Խորհրդին է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 09.06.2017թ. տրամադրված թիվ 3106 տեղեկանքը, ըստ որի՝ Ընկերությունը 24.02.2016թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ժամկետանց հարկային պարտավորություն չի ունեցել:

**3. ՀՀ բնապահպանության նախարարության կողմից կազմակերպված
«ՇՀԱՊՁԲ-15/3 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-16/02)» ծածկագրով շրջանակային
համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետք նաև՝
Ընթացակարգ 3)**

- Ընթացակարգ 3-ին մասնակցելու նպատակով **02.03.2016թ.** հայտ է ներկայացրել «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն:

- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 3-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (02.03.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ՝ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Պատվիրատու 3-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ, խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 3-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն 2016թ. փետրվարի 24-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **165 822 ՀՀ դրամ**ի չափով:

Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն 2016թ. մարտի 2-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **22 500 ՀՀ դրամ** չափով:

- Ընթացակարգ 3-ի գնահատող հանձնաժողովի կողմից 12.03.2016թ. ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.1 կետով որոշվել է «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած N 2 հավելվածը որակել իրականությանը չհամապատասխանող և մերժել, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը:

4. ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից կազմակերպված «ՀՀ ՔԾԽ ՇՀԱՊՁԲ-15/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 4)

- Ընթացակարգ 4-ին մասնակցելու նպատակով **02.03.2016թ.** հայտ է ներկայացրել «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն:

- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 4-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (02.03.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Պատվիրատու 4-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ, խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 4-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն 2016թ. մարտի 2-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **22 500 ՀՀ դրամ** չափով:

- Ընթացակարգ 4-ի գնահատող հանձնաժողովի կողմից 18.03.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով որոշվել է «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած N 2 հավելվածը համարել իրականությանը չհամապատասխանող և հայտը մերժել, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը, համաձայն որի՝ Ընկերությունը

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **22 500 ՀՀ դրամի** չափով:

- «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրել է Ընկերության վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Նոր Նորքի հարկային տեսչության կողմից 29.04.2016թ. տրամադրված թիվ 3070 տեղեկանքը, ըստ որի 22 500 ՀՀ դրամ տուգանքը եղել է նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի գծով:

- «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարության օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության գլխավոր վարչության օպերատիվ հետախուզության վարչության **29.02.2016թ.** N 1430258 վարչական ակտը, համաձայն որի՝ Ընկերությունը հարկային մարմնի զարգացման ֆոնդին պետք է վճարի **22 500 ՀՀ դրամ, վճարման ժամկետը սահմանելով 10 օր (մինչև 09.03.2016թ.):**

Միևնույն ժամանակ, Ընկերությունը ներկայացրել է հարկային մարմնի զարգացման ֆոնդին 22 500 ՀՀ դրամ գումարի վճարումը 02.03.2016թ. կատարված լինելու վերաբերյալ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի N 000039 բյուջետային փոխանցման պատճենը:

5. «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ **Ընթացակարգ 5)**

- Ընթացակարգ 5-ին մասնակցելու նպատակով **26.02.2016թ.** հայտ է ներկայացրել «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն:

- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 5-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (26.02.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Պատվիրատու 5-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ, խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության տրամադրել տեղեկատվություն «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 5-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Կապիտալ

Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն 2016թ. փետրվարի 26-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **165 822 ՀՀ դրամ** չափով:

- Ընթացակարգ 5-ի գնահատող հանձնաժողովի կողմից 09.03.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով որոշվել է «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հայտը մերժել, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը:

- Ընկերությունը խորհրդին է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Նոր Նորքի հարկային տեսչության կողմից 29.04.2016թ. տրամադրված թիվ 3070 տեղեկանքը, ըստ որի «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն 26.02.2016թ. (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ժամկետանց հարկային պարտավորություն չի ունեցել:

7. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում **ներկայացրել է կեղծ տվյալ:**

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապե-

տության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Ընկերությունը **հայտերի N 2 հավելվածներով** Ընթացակարգեր՝ 1-ին, 2-ին, 3-ին, 4-ին և 5-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություններով հայտնել և հավաստել է, որ հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ (20.10.2015թ., 24.02.2016թ., 26.02.2016թ., 02.03.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն, ՀՀ բնապահպանության նախարարությունը, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը և «Վ.Ա.Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ, խնդրել են ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Կապիտալ Քոնսերվաթշն» ՍՊԸ-ի վերաբերյալ, ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել են եզրակացություններ, համաձայն որոնց՝ Ընկերությունն ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ համապատասխանաբար՝ 20.10.2015թ.-ի դրությամբ՝ 6 737 572 ՀՀ դրամի չափով, 24.02.2016թ.-ի

դրությամբ՝ 165 822 ՀՀ դրամի չափով, 02.03.2016թ.-ի դրությամբ՝ 22 500 ՀՀ դրամի չափով, 26.02.2016թ.-ի դրությամբ՝ 165 822 ՀՀ դրամի չափով:

«Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 5 բաժնի կողմից տրամադրված թիվ 79 տեղեկանքը, ըստ որի «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն **20.10.2015թ.** (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

Ընկերությունը Խորհրդին է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Նոր Նորքի հարկային տեսչության կողմից 29.04.2016թ. տրամադրված թիվ 3070 և 09.06.2017թ. տրամադրված թիվ 3106 տեղեկանքները, ըստ որոնց «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն **24.02.2016թ.** և **26.02.2016թ.** (հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ) ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

«Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարության օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության գլխավոր վարչության օպերատիվ հետախուզության վարչության **29.02.2016թ.** N 1430258 վարչական ակտը, համաձայն որի՝ Ընկերությունը հարկային մարմնի զարգացման ֆոնդին պետք է վճարի **22 500 ՀՀ դրամ, վճարման ժամկետը սահմանելով 10 օր (մինչև 09.03.2016թ.),** հետևաբար դեռևս **2016թ. մարտի 2-ի դրությամբ** (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) վերը նշված չափի տուգանքը չի կարող համարվել որպես **ժամկետանց** պարտք Հայաստանի Հանրապետության հարկային վճարների գծով:

Միննույն ժամանակ, Ընկերությունը ներկայացրել է հարկային մարմնի զարգացման ֆոնդին 22 500 ՀՀ դրամ գումարի վճարումը 02.03.2016թ. կատարված լինելու վերաբերյալ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի N 000039 բյուջետային փոխանցման պատճենը:

Այսպիսով, Խորհուրդն ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Ընկերության վերաբերյալ տրամադրված վերը նշված տեղեկանքները և ՀՀ ֆինանսների նախարարության օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության գլխավոր վարչության օպերատիվ հետախուզության վարչության **29.02.2016թ.** N 1430258 վարչական ակտը, գտնում է, որ «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն 20.10.2015թ., 24.02.2016թ., 26.02.2016թ. և 02.03.2016թ. (հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ) ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, ուստի Ընկերությունը չի ներկայացրել կեղծ տվյալ և թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց


ՀՀ ֆինանսների նախարարության 10.02.2016թ. թիվ 1/73-3/4613-16, 29.03.2016թ. թիվ 1/73-3/10793-16, 14.04.2016թ. թիվ 1/73-3/12075-16, 19.04.2016թ. 1/73-3/12384-16 և 20.04.2016թ. թիվ 1/73-3/12509-16 գրություններով ներկայացված «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00883186) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝



Գևորգ Հայրապետյան

Անդամ՝



Հրաչյա Ավետիսյան